Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2024 թվականի հունիսի 14-ի N 208-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի հունիսի 16–ից

«Մինչև 1% idcoin Wildberries-ում IDBank-ի քարտով վճարելիս» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 16.06.2024թ-ից 31.08.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** Բանկի կողմից թողարկված ցանկացած քարտ (բիզնես կամ ֆիզիկական անձանց քարտեր), որը արշավի ընթացքում Wildberries հարթակում կկատարի վճարում:
1.3 **Քարտատեր՝** Քարտի քարտապան:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 16.06.2024թ-ից 31.08.2024թ-ը ներառյալ, Բանկի Քարտով Wildberries հարթակում վճարում կատարելու դեպքում Քարտատերերը կստանան մինչև 1% idcoin հետևյալ տրամաբանությամբ.

- Visa Rocket քարտերի դեպքում սույն քարտի համար տեղեկատվական ամփոփագրով գործող 0,5% cashback-ին կգումարվի այս արշավի արդյունքում տրամադրվող հավելյալ 0,5% idcoin-ը՝ ապահովելով, որ Քարտատերն արշավի շրջանակում ստանա հանրագումարային 1% հետվճար,
- Բանկի այլ Քարտերի դեպքում՝ 1% idcoin:

2.2 Սույն արշավի շրջանակում միևնույն հաճախորդի գծով օրացույցային ամսվա ընթացքում առավելագույն idcoin-ի սահմանաչափը 5 000 ՀՀ դրամ է (նախքան հարկումը) ՝ անկախ Քարտերի քանակից: idcoin-ը ենթակա է վճարման օրացույցային ամսվան հաջորդող ամսվա մինչև 15-րդ աշխատանքային օրը:

2.3 Հետ վերադարձված գնումների դիմաց idcoin չի վճարվում:

2.4 Եթե Բանկի Քարտի տեղեկատվական ամփոփագրով սահմանված է idcoin—ի տրամադրման և սպասարկման առավելագույն սահմանաչափ, ապա սույն Արշավի շրջանակում սահմանված

ամսական 5 000 ՀՀ դրամ (նախքան հարկումը) սահմանաչափը հաշվարկվելու է առանձին՝ անկախ տվյալ Քարտի տեղեկատվական ամփոփագրով սահմանված առավելագույն սահմանաչափը:

2.5 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.6 idcoin-ի տրամադրման և սպասարկման կանոնները տեղադրված է հետևյալ հղմամբ՝ https://idbank.am/upload/iblock/666/noa9o21tx3o9xjdwixalavk3odyu0qj7/IDcoinTC_final.pdf:

2.7 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: